<<ԻՆՏԵՐԱԿՏԻՎ

ԿՐԹՈՒԹՅԱՆ

ԶԱՐԳԱՑՈՒՄ

ՀԻՄՆԱԴՐԱՄ>>

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

2023

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԴԵՐԸ ՈՐՊԵՍ ԱՆԳԼԵՐԵՆԻ ԴԱՍԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՄԻՋՈՑ

ԱՌԱՐԿԱ՝ ԱՆԳԼԵՐԵՆ

ՀԵՂԻՆԱԿ՝ ԻՌԵՆԱ ԱԴԻԼԽԱՆՅԱՆ

ՄԱՐԶ՝ ԵՐԵՎԱՆ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝ ԳԻՏԱԿ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Բովանդակություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....3

ԳԼՈՒԽ 1. <<ՏՏ>>-ՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ԱՆԳԼԵՐԵՆԻ ԴԱՍԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ

1.1.Տեղեկատվական տեխնոլոգիաների ընդհանուր կառուցվածքը,դրանց գործածման հնարավորությունները 5

1.2.ՏՏ-ի օգտագործման հիմնական նպատակները 13

ԳԼՈՒԽ 2. ՏՏ-ՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ Ա Ն Գ Լ Ե Ր Ե Ն Ի ՆՅՈՒԹԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ ..... … 19

2.1.Ուսումնասիրության արդյունքերի վերլուծություն 6

Եզրակացություններ.....17

Առաջարկություններ 18

Գրականության ցանկ.....19

Ներածություն

ՈՒսուցման ակտիվ մեթոդների զարգացումը և կրթական համակարգի կատարելագործումն անհնար է պատկերացնել առանց ուսուցման մեջ տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների ներդրման, որոնք կոչվածեն առավել ակտիվորեն նպաստելու սովորողների մտավոր, ստեղծագործական, բարոյական և հուզական զարգացմանը: Ժամանակակից տեղեկատվականտեխնոլոգիաների ներդրման հարցերը նկատելի ազդեցություն ունեն մանկավարժների աշխատանքի ինտենսիվության, ինչպես նաև աշակերտների ուսուցման արդյունավետության վրա: Ժամանակակից դպրոցի մանկավարժների ևսովորողների մասնագիտական որակների բարձրացման հիմնական խնդիրներից մեկը նրանց արհետավարժության մեծացումն է ՏՏ-ի օգտագործման ոլորտում: ՏՏ- ների օգտագործման նպատակներն են հանդիսանում՝

- Բարձրացնել սովորելու մոտիավացիան,
- Մեծացնել ուսումնական գործընթացի արդյունավետությունը,
- Նպաստել սովորողների ճանաչողական կարողությունների խթանմանը,
- Բարելավել դասի անցկացման մեթոդները,
- Ժամանակին համակարգել ուսուցման և դաստիարկության արդյունքները,
- Պլանավորել և համակարգել սեփական աշխատանք,
- Օգտագործել այն, որպես ինքնակրթության միջոց,
- արագ և որակյալ պատրաստվել դասին:

Ուսումնասիրության նյութի արդիականությունը պայմանավորված է կրթության բնագավառում ՏՏ-ների կիրառման անհարժեշտությամբ և արդյունավետությամբ, և անգլերենի դասին դրանց կիրառման դժվարություններով: Այսօր կրթության բնագավառում նորագույն միտումների քննարկումն անհնար է թվում առանց նորագույն տեխնոլոգիաների առկայության: Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը նպաստում է անգլերենի որակի բարձրացմանը: Այս իմաստով դպրոցներում տեխնոլոգիայի կիրառվող բազմազան ձևերը հեշտացնում են մեր գործունեությունը: Այսօր համակրգիչներ օգտագործելու ունակությունը կարող է նույնքան կարևոր լինել, որքան կարդալու, գրելու, հեռախոսից օգտվելու ունակությունը: Տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործումը անգլերենի դասին որակապես փոխում է ուսուցչի

դերը. ուսուցիչը դառնում էսովորողի կրթական գործը կազմակերպող, նրան աջակցող և գնահատող գործընկեր: Անգլտեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաները օգտագործում են ուսումնական նյութն ավելի գրավիչ և հասկանալի ներկայացնելու համար:

Մեր ուսումնասիրության նպատակն է՝ մշակել մեթոդական ցուցումներ ՝ անգլերենի դասերի ժամանակ, ՏՏ-ների կիրառման ուղությամբ: Պարզել, թե որքանով են տեղեկատվական տեխնոլոգիաներ կիրառվում դասագործընթացում, անգլերենի դասերի տարբեր փուլերում:

Մեր նպատակին հասնելու համար պետք է հասնեինք հետևյալ **խնդիրների լուծմանը, որոնք դրել էինք մեր առջև.**

- Ուսումնասիրել հետազոտական աշխատանքի հիմնախնդրի վերաբերյալ մասնագիտական գրականություն:
- Ուսումնասիրել անգլերենի ծրագիրն ու դասագրքերը, ՏՏ-ների կիրառման տեսանկյունից:

ԳԼՈՒԽ 1. <<ՏՏ>>-ՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ԱՆԳԼԵՐԵՆԻ ԴԱՍԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

1.1.ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ,ԴՐԱՆՑԳՈՐԾԱԾՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՆԳԼԵՐԵՆԻ ԴԱՍԱԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ:

Նորագույն տեխնոլոգիաների ի հայտ գալը, աշխարհում կատարվող փոփոխությունները այսօր բոլորին ստիպում են յուրացնել նոր գիտելիքներ և հմտություններ: Հասարակության լիարժեք անդամ ձևավորելու համար հարկավոր է, որպեսզի մարդը տեղեկացված լինի նորագույն տեխնոլոգիաներին: Այս ամենի պարտադիր պայմաններից է տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների ներդրումը կրթության մեջ՝ բոլոր աստիճաններում, սկսած տարրական դասարանից: Ժամանակակից հասարակության օբյեկտիվ պահանջներց մեկը դպրոցներում ուսումնադաստիարակչական գործընթացի ավելի արդյունավետ կազմակերպելու ուղիների որոնումն է: Այս դարում, երբ մեծ առաջընթաց է գրանցվում դպրոցները ՏՏ-ներով հարստացնելու և աշակերտներին մղելու ավելի արդյունվետ դասեր անցկացնելու, պետք է նաև հաշվի առնել այն փաստը, որ տվյալ դպրոցի ցանկացած աշակերտ ոչ միայն պետք է ունենա որոշակի գիտելիք, այլ նաև պետք է տիրապետի որոշակի կարողությունների, որը թույլ կտա նրան այդ ոլորտում ուսումնական և աշխատանքային գործունեություն իրականացնելու:

<<Կրթական բարեփոխումների ներկա փուլում ՏՏ-ների կիրառումն ուսուցման արդյունավետության բարձրացման և գործնական ուղղվածության ապահովման պայմաններից մեկն է:>>[2] Երեխաները ավելի արդյունավետ են սովորում, եթե նրանց հնարավորություն ենք տալիս համագործակցելու միմիյանց հետ, փոխանակելու կարծիքներ, կատարել ընտրություններ և շարժվել իրենց հետաքրքրությունների հետքերով: Օգտագործելով տարբեր տեխնոլոգիաներ անգլերենի դասավանդման համար՝ մենք երեխաների մեջ սերմանում ենք սեր դեպիգիտելիքը: Տեխնոլոգիաների շնորհիվ երեխաները ձեռք են բերում՝

- տեղեկությունը ինքնուրույն որոնելու, ուսումնասիրելու, հավաքելու, հետևություններ անելու կարողություն:

- տեխնոլոգիական համակարգերը, տեղեկատվությունը պատասխանատվությամբ օգտագործելու կարողություն:

ՏՏ միջոցներով անցկացվող անգլերենի դասը բարձրացնում է սովորողների ակտիվության մակարդակը, փոխում է նրանց մտածելակերպը, հարստացնում է նրանց ուսումնական և գործնական խնդիրների լուծումների որոնման մարտավարության ձևավորման ունակությունները:

ՏՏ-ների կիրառումը համեմատաբար նոր մոտեցում է ուսումնական գործընթացում, որն ապահովում է առավել մեծ ծավալի ուսումնական տեղեկատվության փոխանցման հնարավորություն: Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը մեծ ազդեցություն է ունենում ուսուցման արդյունավետության վրա: Հարկավոր է նշել, որ ՏՏ-ների կիրառումը ունի իր բացասական և դրական կողմերը: ՏՏ-ների միջոցով աշակերտները կատարում են աշխատանքները իքնուրույն և ուսուցչի հետ շփումը կրճատվում է: Կարող է նաև դժվարություններ և բացասական կողմեր առաջանալ,երբ սովորողներին տալիս են ազատություն՝ տեղեկատվության որոնման և օգտագործման համար, քանի որ այդ ընթացքում նրանք կհայտնվեն անցանկալի կայքերում:

Ամեն ջանք գործադրվում է, որպեսզի հետագա սերունդները ստեղծագործ և պատասխանատու դաստիարակվեն: Կրթական բարեփոխումներն առավել հաջող կստացվեն, եթե յուրաքանչյուր մանկավարժ իր ամենօրյա դասապրոցեսն ինքնուրույնաբար հարստացնի նորություններով՝ կատարելագործելով սեփական փորձն ու գիտելիքները: Ներկայումս մանկավարժները երեխաներին կրթելիս պետք է հաշվի առնեն այն փաստը, որ նոր սերունդը մեծացել է բջջային հեռախոսների և համակարգիչների հետ շփվելով, նրանց պահանջն է դառնում արագ ուսումնական գործընթացը և մշտական տեսողական խթանը: Ներկայիս դպրոցականը սովոր է բազմաթիվ համակարգչային խաղերի և գունեղ տեսահոլովակների: Նրանք նման ձևով էլ ընկալում են շրջապատող աշխարհը:Եվ այս ամենը պատճառ է հանդիսանում, որպեսզի ժամանակակից մանկավարժը այս ամենի ձգտումով և առավելագույն արդյունք ստանալու ակնկալիքով, դասապրոցեսում պետք է կիրառի թվային տեխնոլոգիաներ, գրաֆիկական և անիմացիոն պատկերներ, ձայնային էֆեկտներ:

---

[2] Տե՛ս Մ.Զ. Հկոբյան,Ս.Գ. Պողոսյան Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը կրթական համակարգում,Ե., 2015, էջ 14

<<Ինտերակտիվ տեխնոլոգիաները ակտիվորեն ներթափանցում են մեր առօրյան: Դրանք օգնում են մարդկանց՝ հնարավորինս լավ բացահայտելու իրենց ստեղծագործական հնարավորությունները,աշխատանքում և կրթության մեջ առավել հաջողակ դառնալ և պարզապես գունեղ ու հաճելի դարձնել իրեն շրջապատող աշխարհը:>>[3]

Կրթության բնագավառում նորագույն միտումների քննարկումն անհնար է թվում առանց նորագույն տեխնոլոգիաների առկայության: Այսօր համակարգիչներ օգտագործելու ունակությունը կարող է նույնքան կարևոր լինել, որքան կարդալու, գրելու, ձայնագրելու կամ հեռախոսից օգտվելու ունակությունը: Դասարաններում, որպես ուսուցման և ուսումնառության միջոցներ կարող են կիրառվել հեռուստացույցներ, տեսաձայնագրիչներ, ձայներիզներ, տեսաժապավեններ, համակարգիչներ: <<Անառարկելի է, որ համակարգիչը ցանկացած խնդիր լուծելու գործընթացում մարդու օգնականն է և գործողությունների արագացուցիչը: Այն յուրաքանչյուրի համար անպատկերացնելի իրական դաշտ է ստեղծում անձնային նպատակներին հասնելու ճանապարհին: Շատերն են մեդիակրթության բավականին մեծ փորձ ձեռք բերել՝ շնորհիվ իրենց ծնողների և մանկավարժների: Սակայն այդ գործունեությունը բավարար չափով չի կարգավորվում և վերահսկվում հենց նրանց կողմից՝ ինչպես տանը, այնպես էլ դպրոցում: Այս հանգամանքն այսօր առաջին հերթին մտահոգում է մանկավարժներին և հոգեբաններին, որոնք երեխաների համակարգչային կախվածության և համացանցային ծուղակի կանխարգելման նպատակով ծնողներին ներկայացնում են խորհուրդներ: Դրանք կնպաստեն, որ երեխաների մուտքը համացանց դառնա անվտանգ կամ նվազի վտանգավորության աստիճանը:>>[4] Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների օգտագործումը որակապես փոխում է ուսուցչի դերը,ուսուցիչը դառնում է սովորողի կրթական գործը կազմակերպող, նրան աջակցող,ուղղություն ցույց տվող և գնահատող գործընկեր:

[3] Տե՛ս <<Նախաշավիղ>>, 4. 2016, էջ 8

Անգլերենի դասին տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաները օգտագործում են ուսումնական նյութն ավելիգրավիչ և հասկանալի ներկայացնելու համար: Ելնելով ժամանակակից դպրոցի պահանջներից՝ անհրաժեշտ է ավելացնել համակարգչի օգտագործմամբ ուսուցանվող առարկաների շրջանակը: Ուսումնական դպրոցականների ուսումնական գործընթացում ՏՏ-ների օգտագործման նպատակահարմարության մասին են խոսում նրանց տարիքային այնպիսի առանձնահատկությունները, ինչպիսիք են՝ տեսողական-պատկերավոր մտածողության զարգացումը՝ բանավոր և տրամաբանական մտածողության համեմատ, ինչպես նաև անալիզատորների անհավասար և ոչ բավարար զարգացումը, որոնց շնորհիվ երեխաները ստանում են ինֆորմացիան՝ դրա հետագա մշակման համար: Եթե տեղեկատվությունը չի ընկալվել, ապա այն չի կարող հասկանալի, յուրացված լինել, չի կարող դառնալ անհատի սեփականությունը, նրա մշակույթի տարրը: ՏՏ-ների օգտագործման հնարավորությունների շառավիղը բավականին լայն է: Իհարկե՝ աշխատելով դպրոցականների հետ, անհրաժեշտ է հիշել պատվիրանը՝ <<Մի՛ վնասիր>>:[5] Ուսումնական գործընթացի կազմակերպումը անգլերենի դասին առաջին հերթին պետք է խթան հանդիսանա սովորողների ճանաչողական կարողությունների ակտիվացման, ուսումնական նյութի հաջող յուրացման համար և նպաստի սովորողի հոգևոր զարգացմանը: ՏՏ-ն պետք է կատարի որոշակի կրթական գործառույթ, օգնի երեխային կողմորոշվել տեղեկատվության հեղեղի մեջ, ընկալել այն, հիշել, և ոչ մի դեպքում չվնասել առողջությունը: Պետք է հաշվի առնել կրտսեր դպրոցականի հոգեբանական առանձնահատկությունները, և ՏՏ-ները օգտագործել հստակ մտածված և չափավոր: ՏՏ-ի օգտագործումը դասին պետք է կրի նուրբ բնույթ: Ուսուցիչը դասին նախապատրաստվելիս պետք է հանգամանորեն մտածի ՏՏ-ի օգտագործման նպատակի, տեղի և ձևի մասին: Այսինքն՝ ուսումնաճանաչողական գործընթացում դասավանդողի կուլտուրան ենթադրում է ՏՏ միջոցների չափավորված, տեղին և ժամանակին համալիր կիրառում:

---

[4] Տե՛ս Թոփուզյան Ա.Օ.,Գյուլամիրյան Ջ.Հ.,ՊողոսյանԼ.Մ., Ասատրյան Ս.Մ., ԱնտոնյանԼ.Ա., Ղազարյան Մ.Զ., Տեղեկատվական տեխնոլոգիաները տարրական դպրոցում, Ե., 2018, էջ 149

ՏՏ-ի կիրառումը անգլերենի դասագործընթացում օգնում է սովորողներին կոմնորոշվել շրջապատող աշխարհի տեղեկատվական հորձանուտում, տիրապետել տեղեկատվական դաշտում աշխատելու գործնական միջոցներին, զարգացնել հմտություններն ու կարողությունները:

ՏՏ-ի կիրառումը՝

- ակտիվացնում է սովորողների ճանաչողական գործունեությունը,
- ավելի քիչ ժամանակի ընթացքում ավելի շատ ինֆորմացիա է հաղորդվում,
- թույլ է տալիս դասերն անցկացնել բարձր գեղագիտական և հուզական մակարդակի վրա,
- հեշտացնում է նյութի յուրացման ընթացքը,
- ապահովում է դիտողականությունը,
- տպավորիչ է դարձնում դասը աշակերտի համար,
- ներառում է մեծ քանակությամբ դիդակտիկ նյութ,
- մեծացնում է առարկայի հանդեպ սովորողների հետաքրքրությունը,
- ապահովում է տարբերակված ուսուցման բարձր մակարդակ:

Հայտնի է, որ երեխաների մտածելակերպը,լեզվատրամաբանությունը, սովորելու և հաղորդակցվելու կարողությունները ձևավորվում են տարրական դպրոցում: Եվ դրեն ժամանակն է կրտսեր դպրոցում ավանդական ուսուցման մեթոդները փոխարինել տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների, նորագույն միջոցների օգտագործմամբ և նոր մեթոդների մշակմամբ: Այսօր դասերը, որոնք անցկացվում են առանց ՏՏ-ների, չեն կարող համարվել որակյալ և մատչելի: ՏՏ-ի մուտքը ուսումնական գործընթաց՝ մղում է աշակերտներին ստեղծագործական- հետազոտական աշխատանքի: Ժամանակակից համակարգիչները հնարավորություն են տալիս, որպեսզի դասը ներկայացվի անիմացիաներով, լուսանկարներով, տեսագրություններով,երգերով:

[5] Տե՛ս <<Դպիր>>էլեկտրոնային ամսագիր

ՏՏ-ների օգտագործմամբ ուղեկցվող դասերը իրենց պարզության, գեղեցկության և տեսանելիության շնորհիվ ուսումնական նյութի ընկալման ընթացքում առավել մեծ տպավորություն են թողնում սովորողների հոգեբանահուզական ֆոնի վրա:Մուլտիմեդիան նյութի և գործընթացների ներկայացումն է ոչ թե ավանդական տեքստային նկարագրությամբ, այլ ֆոտոնկարների, տեսանյութերի, գծագրերի, շարժանկարների, ձայնի օգնությամբ: Դասի անցկացումը մեդիայի շնորհիվ գրավում է կրտսեր դպրոցականներին: Այդ տիպի դասերի ընթացքում դասարանում ստեղծվում է իրական շփման իրավիճակ, որի ժամանակ երեխաները ձգտում են իրենց մտքերն արտահայտել սեփական բառերով, հաճույքով են կատարում առաջադրանքները, ուսումնական նյութի հանդեպ մեծ հետաքրքրություն են ցուցաբերում:

ՏՏ-ով մենք ունենք երկու հիմնական առավելություն՝ որակական և քանակական: Որակական առումով նոր հնարավորությունները ակնհայտ են, եթե ուղղակի համեմատենք բանավոր նկարագրությունները տեսաձայնային ներկայացման հետ: Քանակական առավելությունները արտահայտվում են նրանով, որ մեդիամիջավայրը անհամեմատելի մեծ է տեղեկության խտությամբ: Իսկապես, տեքստի մեկ էջը դասավանդողը արտաբերում է 1-2 րոպեի ընթացքում: Այդ նույն րոպեի ընթացքում լայնէկրան տեսանյութը բերում է ինֆորմացիայի ավելի մեծ ծավալ: Հաստատված է, որ նյութի բանավոր մատուցման ժամանակ սովորողը րոպեում ընկալում է և ընդունակ է վերլուծելու մինչև հազար պայմանական միավոր տեղեկություն, իսկ տեսողական օրգանների <<միացման>> դեպքում՝ մինչև 100 հազար այդպիսի միավոր: Դպրոցականի մոտ ավելի զարգացած է կամային ուշադրությունը, որը հատկապես կենտրոնանում է, երբ նրան հետաքրքիր է, երբ ուսումնական նյութը տարբերվում է պարզությամբ, պայծառությամբ, երբ սովորողի մոտ դրական հույզեր են առաջանում: Դասի ժամանակ տեղեկատվական տեխնոլոգիաներից՝ համակարգչի օգտագործումը հնարավորություն է ընձեռում երեխային տեղեկատվությունը տեքստային կամ գրաֆիկ ձևով ներկայացնելու: Մուլտիմեդիայի կիրառումը սովորողին հնարավորություն է տալիս ուսուցման գործընթացի տարբեր փուլերում ընտրել ցանկալի արդյունքի հասնելու քայլերի հաջորդականություն: Մուլտիմեդիան ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիա է, որն իր մեջ ներառում է տարբեր

փուլերում ընտրել ցանկալի արդյունքի հասնելու քայլերի հաջորդականություն: Մուլտիմեդիան ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիա է, որն իր մեջ ներառում է տարբեր տեքստեր, ձայնագրություններ, անիմացիաներ: Այդ ծրագրային միջոցների և սարքավորումների միջոցով հնարավորություն է ստեղծվում տեղեկատվությունը մի քանի զգայարանների միջոցով ընկալելը:

<<Մուլտիմեդիան նպաստում է նաև ուսուցչի աշխատանքի որակի բարձրացմանն ու հետադարձ կապի ապահովմանը,ռեֆլեքսիային: Մեդիադասերը օգնում են լուծել հետևյալ դիդակտիկ խնդիրները.

- յուրացնել թեմայի վերաբերյալ հիմնական գիտելիքները
- համակարգել ձեռք բերած գիտելիքները
- ձևավորել ինքնակառավարման հմտություններ, ամբողջությամբ ձևավորել սովորելու շարժառիթ,

ուսումնամեթոդական օգնություն ցուցաբերել սովորողներին՝ ուսումնական նյութի ստեղծման ինքնուրույն աշխատանքում:Այս տեխնոլոգիան կարելի է դիտել որպես ուսուցման բացատրական-զննականմեթոդ, որի հիմնական նպատակը ուսումնական նյութի հաղորդման ճանապարհով սովորողների՝ տեղեկատվության յուրացման կազմակերպումն է և դրա հաջող ընկալման ապահովումը, որը ընդլայնվում է, երբ զուգահեռ միանում է նաև տեսողական հիշողությունը: Հայտնի է, որ մարդկանց մեծամասնությունը մտապահում է լսածի 5% և տեսածի 20%-ը: Ձայնային և տեսողական տեղեկատվության միաժամանակյա օգտագործումը բարձրացնում է մտապահելու ունակությունը մինչև 40-50%: Մեդիածրագրերը ինֆորմացիան մատուցում են զանազան ձևերով և հենց դրանով ուսումնական գործընթացն ավելի արդյունավետ են դարձնում: Ժամանակի խնայողությունը անհրաժեշտ նյութի ուսումնասիրման համար միջինում կազմում է 30%, իսկ ձեռք բերած գիտելիքները պահպանվում են հիշողության մեջ ավելի երկար:

Կրտսեր դպրոցում մեդիատեխնոլոգիաների օգտագործումը դասի ընթացքում սկզբունքորենչի փոխում դասի կառուցվածքը: Նրա մեջ նախկինի պես պահպանվում են բոլոր հիմնական փուլերը, փոխվում են միայն դրանց ժամանակավոր բնութագրերը: Մեդիաներկայացման /պրեզենտացի / կառուցվածքային դասավորությունը զարգացնում է համակարգված, վերլուծական մտածողությունը: Բացի դրանից,

պրեզենտացիայի օգնությամբ կարելի է օգտագործել ճանաչողական գործունեության կազմակերպման զանազան ձևեր՝ ֆրոնտալ, խմբային, անահատական:

Այսպիսով, մեդիատեխնոլոգիաները հարստացնում են ուսուցման պրոցեսը, թույլ են տալիս ուսուցումը դարձնել ավելի արդյունավետ, նաև նպաստում են սովորողի ստեղծագործական զարգացմանը:Ուսումնական գործընթացում տեղեկատվական ու հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը մի քանի կարևոր կողմեր ունի,մասնավորապես.

- Տեղեկատվական ու հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումընպաստում է առարկաների միջև կապի դրսևորմանը
- Տեղեկատվական ու հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումընպաստում է ստեղծագործական ու նորարական մոտեցումների զարգացմանը, ինչը չափազանց կարևոր է հիմնախնդիրների վրա հիմնված կառուցողական դասարանային միջավայր ստեղծելու համար:

1.2 ՏՏ-ի օգտագործման հիմնական նպատակները

Կրթական համակարգն ամբողջական համակարգ է, որի հիմնական և գլխավոր առանձնահատկություններից մեկը տեղեկատվությունն է: Ժամանակակից կրթական համակարգում գլխավորը ոչ թե տեղեկատվությունը յուրացնելն է, այլ դրա հետ ակտիվ աշխատելը պետք է լինի, որն էլ հենց ենթադրում է ինքնուրույն ստեղծագործական մտածողություն:

Կրթական համակարգը չի կարող սահմանափակվել միայն ավանդական ուսուցման միջոցներով, այն պետք է հարստացվի նաև ժամանակակից տեխնոլոգիաներով: Ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների միջոցով ավելի արդյունավետ է դառնում նյութը մատուցել երեխաներին: Տեղեկատվական տեխնոլոգիաների ուսումնական հիմանական նպատակները հանդիսանում են նյութը ավելի մատչելի ներկայացնելու, ժամանակի ավելի արդյունավետ օգտագործման, տեսողական հիշողությունը զարգացնելու: Այսօր հատկապես շեշտվում է զարգացնող կրթության դերը: Եթե կրթության հիմնական նպատակը ուսումնական նյութի յուրացումն է, ապա ՏՏ-ների հիմնական նպատակը հետևյալն

Է. Զարգացնել աշակերտի մտապահելու կարողությունը:

- Վերարտադրել լսած նյութը:
- Կարողանալ ստացած գիտելիքները ՏՏ-ների միջոցով կիրառել:

ՏՏ-ները հնարավորություն են տալիս ինչպես սովորողներին, այնպես էլ ուսուցիչներին գտնել տեղեկատվության բազմազան և բազմապիսի աղբյուրներ և արդյունավետ օգտվել դրանցից: Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը նպաստում է գիտական հետազոտությունների աջակցմանը, ուսուցման գործընթացի շրջանակների ընդլայմանը, սովորողների անհատական գործունեության արդյունավետության բարձրացմանը:

Տեխնոլոգիաների կիրառումը մեր օրերի ուսուցչին ստիպում են անընդհատ յուրացնել նոր գիտելիքներ և հմտություններ, պատրաստ լինել շարունակական ուսուցման: Սա ճիշտ է ոչ միայն ուսուցիչների, այլ նաև սովորողների համար, քանի որ կրթական մակարդակը և սովորելու կարողությունները սկզբունքային նշանակություն են ստանում դպրոցի զարգացման և կրթական բարեփոխումների համար: Սովորողների սովորելու ունակությունները մեծացնելու և գիտելիքն արդիականացնելու խնդրի առաջնահերթության գիտակցումը ենթադրում է մշտական աշխատանք և նշանակալի ներդրումներ կրթությունն ապահովող կառույցների կողմից:

Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաները բավարարում են հասարակության կարիքները բարձր որակ և մատչելի կրթություն ստանալու հարցում: Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների օգտագործումը կրթության մեջ, ներառում է երկու հիմնական ուղղություններ: Առաջինը՝ օգտագործել ու այս տեխնոլոգիաների հնարավորությունները կրթության մատչելիությունը բարձրացնելու համար, ինչը արվում է կրթական համակարգում՝ ներառելով այն մարդկանց, ում համար այլ կերպ հնարավոր չէ ընդհանրապես մատչելի լինել: Մենք խոսում ենք հեռավար ուսուցման մասին:

Երկրորդ ուղղությունը ներառում է տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառում՝ փոխելու այն, ինչ պետք է դասավանդել և ինչպես դասավանդել, այսինքն՝ դասընթացների բովանդակությունն ու մեթոդները ավանդական լրիվ դրույքով: Կրթության մեջ ՏՏ-ների օգտագործման երկու հիմնական նպատակ կարելի է ձևակերպել.

1) Կրթության որակի բարելավում:

2) Կրթության մատչելիության բարձրացումը:

Եթե կետերով համակարգենք կրթության ոլորտում ՏՏ-ի օգտագործման նպատակները, կունենանք այսպիսի պատկեր՝

- ✓ Բարձրացնել աշակերտների սովորելու մոտիվացիան,
- ✓ Մեծացնել ուսումնական գործընթացի արդյունավետությունը,
- ✓ Նպաստել սովորողների ճանաչողական, վերլուծական, քննադատական կարողությունների զարգացումը,
- ✓ Բարելավել դասի անցկացման մեթոդները,
- ✓ Յուրաքանչյուր երեխայի նկատմամբ անհատական մոտեցում ցուցաբերել,
- ✓ Պլանավորել և համակարգել սեփական աշխատանքը,
- ✓ Օգտագործել ՏՏ-ն որպես ինքնակրթության միջոց,
- ✓ Դասին արագ ու որակյալ պատրաստվելու հնարավորություն թե՛ ուսուցչին, թե՛ աշակերտին:

Ուսուցչի տեղեկատվական իրազեկությունը, այսինքն՝ տեղեկատվության հետ աշխատելու և այն մյուսներին փոխանցելու ընդհանուր կարողությունների համակարգը, ժամանակակից կրթության և ուսուցիչների մասնագիտական զարգացման գերակայություններից մեկն է: Չափորոշչային պահանջները, որոնք կարող են լուծվել ՏՏ-ների միջոցով բազմազան են: Հանրակրթության պետական չափորոշիչը նախատեսված 12-ամյա կրթության համար, տարրական դասարանի սովորողին ընձեռում է գիտելիքների և հմտությունների ձեռքբերման ու դրանց գործնական կիրառման նոր հնարավորություններ:

Դրանց շնորհիվ մշակվում են նոր դասագրքերի կառուցվածքները, համալրվում են ուսումնաօժանդակ նյութերը՝ որոնց օգնությամբ կընդլայնվեն ինքնուրույն կերպով գիտելիքներ ձեռք բերելու հնարավորությունները: Չափորոշիչների միջոցով պետք է ուսումնական գործընթացում ներդրվեն ժամանակակից հաղորդակցական և տեղեկատվական տեխնոլոգիաներ:

ԳԼՈՒԽ 2.

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

<<SS-ների կիրառումը անգլերենի նյութերի ուսումնասիրման ընթացքում հետազոտական աշխատանքի ուսումնասիրությունների շրջանակում հարցումներ կատարեցինք դասարանի ուսուցչուհիների շրջանում:

Հարցաթերթիկի նպատակն էր՝ պարզել, թե որքանով են կիրառվում SS-ներ անգլերենի դասերին, նաև բացահայտել, թե որոնք են SS-ներ կիրառելու հիմնական խոչընդոտները:

Դիտարկենք հարցման արդյունքները

1.Առաջին հարցին **<<Հաճախ եք կիրառում SS-ներ անգլերենի ժամերին>>,** ուսուցիչների մեծամասնությունը պատասխանել է երբեմն: Նրանցից 36%-ը նշել է, որ օգտագործում է հաճախ, 7%-ը նշել է բավարար, իսկ 57%-ը երբեմն: Այսինքն, այս ամենից պարզ է դառնում, որ մայրենիի դասաժամերը այդքան էլ հագեցվածչեն SS-ներով:

Ուսուցիչների պատասխաններն՝ ըստ առաջարկված տարբերակների



Հարց 1

Երկրորդ հարցին, թե <<Ինչպիսի SS-ներ եք կիրառում անգլերենի ժամերին>>, ուսուցիչների մեծամասնությունը պատասխանել է համակարգիչ: Հարցման արդյունքը ներկայացված է կից տրամագրում:

Ուսուցիչների պատասխաններն՝ ըստ առաջարկված տարբերակների

Հարց 2



Ուսուցիչների պատասխաններն՝ ըստ առաջարկված տարբերակների
Հարց 3



Հարցաթերթիկի՝ <<Անհրաժեշտ է արդյո՞ք ՏՏ-ի կիրառումը ուսուցման գործընթացում>> հարցին տրվել է հետևյալ պատասխանը՝ 100% այո: Այսինքն տրված պատասխաններից պարզ է դառնում, որ 21-րդ դարում ՏՏ-ները մեծ նշանակություն ունեն ուսուցման գործընթացում:

Ուսուցիչների պատասխաններն՝ ըստ առաջարկված տարբերակների



Հինգերորդ հարցին՝ <<Դրական է անդրադառնում ուսուցման պրոցեսում ՏՏ-ների կիրառումը>>, բոլորի կարծիքը համապատասխանում էր, նշված էր այո, և այնհարցին, թե ինչու այո կամ ոչ, նրանք նշել էին հիմնականում, որ ՏՏ-ները գրավում են երեխաներին, դասի նպատակները ավելի հեշտ են իրականանում, նյութը ավելիպարզ ձևով է ընկալվում և ավելի ակտիվ է դասը լինում: <<Որքա՞ն ժամանակ է որ օգտագործում եք ՏՏ-ներ անգլերենի դասերին: Նշե՛լ հստակ ժամանակ>>: Ուսուցիչների մեծամասնությունը հիմնականում 4 տարի է ինչ օգտագործում են ՏՏ-ներն: Այս պատասխաններից կարելի է եզրակացնել, որ դպրոցներում հիմնականում պայմանների բացակայությունն է այս ամենի արդյունքը: Համապատասխան տրամագրի միջոցով ներկայացված է տոկոսային հարաբերությունը :

Ուսուցիչների տված պատասխանները



Հաջորդ հարցին՝ <<SS կիրառելը կարո՞ղ է փոխարինել ավանդական դասի գործընթացի միջոցները>>, մեծամասնությունը նշել էր մասամբ, իսկ որոշ մասը նշել էր այո: Իսկ այն հարցին, թե ինչու այո, որոշ մասը նշել էր, որ իրականացվող աշխատանքը պետք է լինի համակցված, մյուսները նշել էին, որ, հիմք ընդունելով ավանդական դասապրոցեսը, պետք է ներգրավել SS գործիքները: Իսկ մյուսները չէին հիմնավորել իրենց պատասխանը:Ուսուցիչների պատասխաններն՝ ըստ առաջարկված տարբերակների



Անգլերենի դասագործընթացում, որո՞նք են SS իրագործելու հիմնական խոչընդոտները>>:Ներկայացվել է հետևյալ տրամագրում, որտեղ միայն ուսուցիչների



կարծիքներն են:

Հարցախույզի արդյունքների վերլուծությունից հետո եկանք այն եզրակացության , որ անցկացվող անգլերենի դասերը այդքան էլ հագեցված չեն SS-ներով, քանի որ հիմնական խոչընդոտ են հանդիսանում դասասենյակների կահավորվածությունը, դպրոցների հագեցվածության ցածր մակարդակը, ինտերնետի բացակայությունը, նաև ուսուցիչների ոչ բավարար տեղեկությունները SS-ների կիրառելու վերաբերյալ: Հարցախույզի արդյունքներից պարզ դարձավ նաև, որ SS ասելով միայն հասկանում են համակարգիչը, և միայն դա են օգտագործում ուսումնական գործընթացում:

Եզրակացություններ

<<ՏՏ-ների կիրառումը անգլերենի դասագրքի նյութերի ուսումնասիրման ընթացքում>> ավարտական աշխատանքին վերաբերող մասնագիտական գրականության ուսումնասիրման, ինչպես նաև մանկավարժական պրակտիկայի ընթացքում իրականացրած աշխատանքի արդյունքների վերլուծություններից և իրականացրած հարցախույզների արդյունքից հանգեցինք հետևյալ եզրակացություններին.

- Ուսումնասիրելով հետազոտական աշխատանքի հիմնախնդրի վերաբերյալ մասնագիտական գրականություն, պարզեցինք՝ որ բավականին մեծ տեղ է հատկացվում տարրական դասարաններում տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմանը: ՏՏ-ների կիրառումը համեմատաբար նոր մոտեցում է ուսումնական գործընթացում, որը ապահովում է առավել մեծ ծավալի ուսումնական տեղեկատվության փոխանցման հնարավորություն:

- Ուսումնասիրելով անգլերենի ծրագիրն ու դասագրքերը՝ ՏՏ-ների կիրառման տեսանկյունից, եկանք այն եզրակացության, որ դրանցում ունենք տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման մեծ հնարավորություններ. բազմաթիվ դասանյութեր հնարավորություն են տալիս ցույց տալ տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման արդյունավետությունը:

- Անցկացրած հարցախույզի արդյունքների վերլուծությունից պարզ դարձավ, որ անգլերենի դասերին ՏՏ-ների կիրառման հնարավորությունները այդքան էլ բավարար չեն, պատճառներից մեկը ուսուցիչների ոչ այդքան լավ պատրաստված լինեն է: ՏՏ-ներով անցկացվող դասը բարձրացնում է սովորողների ակտիվության մակարդակը, փոխում է նրանց մտածելակերպը, հարստացնում է նրանց ուսումնական և գործնական խնդիրների լուծումների որոնման մարտավարության ձևավորման ունակությունները:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Թոփուզյան Ա. Հումանիստական դաստիարակության հիմնախնդիրը մանկավարժության մեջ.- Եր: «Լինգվա», 2009, 297 էջ :
2. Թոփուզյան Ա., Ժամանակակից ուսուցչին ներկայացնող պահանջները, «Մանկավարժական միտք» N 3-4, 2012 էջ 12-17
3. Լեոնտև Ա. Ա., «Մանկավարժական հաղորդակցում»: Երևան 1982, 79 էջ:
4. Կրթության հոգեբանության դասախոսությունների ժողովածու: Ուսումնական ձեռնարկ բուհերի ուսանողների համար/ Կազմ.՝ Վ.Ս. Կարապետյան, Ս.Ռ. Գևորգյան, Ա.Ս. Բերբերյան, Ռ.Հ. Պետրոսյան, Հ.Վ. Խաչատրյան.-Եր.: Լիմուշ, 2017, էջ 312
5. Հակոբյան Ն., Գևորգյան Ս., Հովհաննիսյան Ա., Դավթյան Ա., Մանկավարժական հաղորդակցում Երևան 2010թ. 204 էջ:
6. Հանրակրթության պետական կրթակարգ, Երևան 2004:
7. Միքաելյան Լ, Տարրական դպրոցի ուսուցչի հաղորդակցման մշակույթի բաղադրիչները, «Մանկավարժություն¦ ամսագիր», N 8, 2011 թ.,էջ 18-23:
8. Մխիթարյան Ս., Մանկավարժական հաղորդակցման յուրահատկությունները, Նախաշավիղ ամսագիր, 6. 2011թ. էջ 20-23:
9. Սիսյան Ս. Բ., Խոսքի հաղորդակցային ոճերը, Գիտական աշխատանքների հոբելյանական ժողովածու՝ նվիրված Հայբուսակ համալսարանի հիմնադրման 20 ամյակին, Ե., 2011, էջ 204
10. Հանրակրթության պետական կրթակարգ, Ե., Անտարես, 2004թ.:ՀՀ<<Կրթական չափորոշիչներ>>, Անտարես, Ե., 2011թ.: